Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 722 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 322- Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԴԵԲԵՏԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (COAF) առաքելության հիմքերում է կրթության մակարդակի և կրթական միջավայրի բարելավումը և տրանսֆորմացիան: Մենք հավատում ենք, որ դա հնարավոր է այն դեպքում, երբ կրթությունը կազմակերպող հաստատությունը ունի լավագույն հասանելի միջոցներն ու շենքային պայմանները: Անզեն աչքով պարզ է, որ Լոռու մարզի, Դեբետ բնակավայրի միակ դպրոցի շենքային պայմանները չեն համապատասխանում ժամանակակից դպրոցի պահանջներին: Ելնելով անհրաժեշտությունից հիմնադրամը որոշում է կայացրել ապամոնտաժել դպրոցի հին շենքը և կառուցել նորը: Այս ծրագրով նախատեսվում է նաև վերանորոգել Դեբետի համայնքապետարանի շենքի տանիքը, ինչպես նաև Արցախի փախստական ընտանիքի համար Դեբետում վերակառուցվող տան տանիքի հիմնանորոգումը: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնը վերջին երկու տարում Դեբետում հիմնել է փորձարարական ջերմոց Դեբետի բնակիչների համար և այս ծրագրով նախատեսվում է կառուցել ցանկապատ և դարպաս: Այս ծրագրի կարևոր մաս է կազմում Դեբետի արտաքին լուսավորության ցանցի կառուցումը: Ծրագրի կարևոր բաղադրիչ ենք համարում մեկ հատ էքսկավատոր-ամբարձչի ձեռքբերումը հիմնադրամի կողմից: Ծրագիրը բաղկացած է լինելու 3 փուլից: Դեբետ բնակավայրում կազմակերպվելու է էքսկավատորի շահագործման դասընթացներ: Դասընթացները տևողությունը 2 ամիս է: Այնուհետ կազմվելու է հանձնաժողով և հանձնաժողովը մասնակիցներից ընտրելու է լավագույն 4-ին: 2-րդ փուլում կազմվելու է տնտեսական գործունեության և համագործակցության պլան: Կազմվելու է աշխատանքների իրականացման գրաֆիկ, որի համաձայն աշխատանքները բաշխվելու են ընտրված օպերատորների միջև: 3-րդ փուլով վերը նշված շինարարական տեխնիկայի շահագործմամբ ընտրված օպերատորները ծավալելու են տնտեսական գործունեություն: Վարձավճարը մոտ է լինելու շուկայական գներին, որտեղ մեծ մասը՝ մոտավոր 60-70% աշխատավարձ, իսկ 30-40% էքսկավատորի սպասարկման

		գումար (դիզ. վառելիք, շարժիչի յուղ և առհասարակ սպասարկում)։ Դասընթացները կկազմակերպվեն էքսկավատոր-ամբարձիչը Հայաստան հասնելուն պես։ Համագործակցության պայմանագրերը կնքվելու են 1 տարի ժամկետով, հետագայում երկարաձգման հնարավորությամբ։ Ծրագրի ուժեղ կողմ է համարվում ՔՈԱՖ-ի կողմից իրականացվող բազմաթիվ շինարարական աշխատանքների ծավալը, որտեղ և մեր մասնակիցները կծավալեն գործունեություն։ Ծրագրի տևողությունը չի սահմանափակվելու «Դեբետի զարգացում» ծրագրի ավարտով։ Յուրաքանչյուր տարի կկազմվի նոր աշխատանքային գրաֆիկ և ծրագիրը կկրի շարունակական բնույթ։
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով՝ օրենքով սահմանված արտոնություններից։
3.	Բարեգործը	«Չիլդրեն Օֆ Արմենիա ֆանդ Ինք.», Նյու Յորք, ԱՄՆ, 149 5-րդ ավենյու, սենյակ 500 (Children of Armenia Fund Inc. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA. և դոկտոր Գարո Հ. Արմենը։
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, 0010, Մելիք Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 02569972)։
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, Փամբակ համայնքի Դեբետ բնակավայր Բնակավայրի զարգացում
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 1,029,174,433 (մեկ միլիարդ քսանինը միլիոն մեկ հարյուր յոթանասունչորս հազար չորս հարյուր երեսուներեք) դրամ։
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբետ բնակավայրը։
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի մայիսի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը։
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Ենթակառուցվածքների ծրագիր ընդամենը 1,029,174,433 դրամ։

		1.1) Դեբետ բնակավայրում գոյություն ունեցող միակ դպրոցի նոր շենքի նախագծում «Կետ Արքիթեքթ» ՓԲԸ-ի հետ 35,000,000 դրամի շրջանակներում, ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: 1.2) Դեբետ բնակավայրի «Դեբեդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տարածքի երկրաբանական հետազոտության իրականացում 4,500,000 դրամի շրջանակներում, ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: 1.3) Դեբետ բնակավայրի «Դեբեդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր շենքի կառուցում 605,000,000 դրամի շրջանակներում, ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: 1.4) Դեբետ բնակավայրի 1-ին փողոց, 31 հողամաս հասցեում գտնվող ՍՄԱՐԹ կենտրոնի այգու (ջերմոցի) շուրջ ցանկապատների և դարպասի տեղադրման աշխատանքներ ընդամենը 3,675,433 դրամի շրջանակներում, ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: 1.5) Դեբետ բնակավայրի տարածքում վերակառուցվող տներից մեկի տանիքի հիմնանորոգում «Ավետիսյան Քոնսթրաքշեն» ՍՊԸ-ի կողմից 7,000,000 դրամ, ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: 1.6) Դեբետի համայնքապետարանի շենքի տանիքի վերանորոգում «Ավետսյան Քոնսթարքշեն» ՍՊԸ-ի միջոցով 3,000,000 դրամ, ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: 1.7) Դեբետի համայնքապետարանի շենքի տանիքի վերանորոգում «Բիոտեխ» ՍՊԸ-ի միջոցով 18,999,000 դրամ, ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: 1.8) Դեբետ բնակավայրի ամբողջ տարածքի արտաքին լուսավորության ցանցի շինարարական աշխատանքների իրականացում 300,000,000 դրամի շրջանակներում, ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: 1.9) Էքսկավատոր - ամբարձչի ձեռքբերում 52,000,000 դրամի շրջանակներում, ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Հայաստանի Հանրապետության տարածքում նախատեսվում է ձեռք բերել 152,000,000 դրամին համարժեք էքսկավատոր-ամբարձչի շերեփ և հիդրոմուրճ, շինանյութ և կառուցապատման համար անհրաժեշտ պարագաներ (ամրան, ցեմենտ, քար, թիթեղ, ապակի, պատուհան, դուռ, երկաթ, մեխ, շինարարական հատուկ հագուստ, ցանկապատ, ցանց և այլն՝ ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: 2. Նախատեսվում է ներմուծել 150,000,000 դրամին համարժեք էքսկավատոր-ամբարձիչ, շինանյութ, արտաքին լուսավորության համար անհրաժեշտ սյուներ, LED լույսեր, մալուխ, ամրան և այլն՝ ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում:

		3. Նախատեսվում է կնքել 727,174,433 դրամին համարժեք նախագծման աշխատանքների կատարման, շինարարության վերահսկողության, հեղինակային հսկողության, կապալի, խորհրդատվության տրամադրման պայմանագրեր՝ ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպու-թյունների հետ	Նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության, Լոռու մարզպետարանի և Դեբետի համայնքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՀԱ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

13.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ